ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆՈՒՄ IX—X ԴԱՐԵՐՈՒՄ

Վ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Վասպուրականում IX—X դդ. որոշակի զարգացման հասան արհեստագործական արտադրության տարբեր ճյուղեր։ Վաղ միջնադարում Վասպուրականի տրհեստագործական արտադրությունն ուներ ավելի պարզ ձևեր, սպասարկում էր երկրագործությանը և տակավին անջատված չէր նրանից, նպաստում էր բնատնտեսական հարաբերությունների հարատևմանը։ Եվ որովհետև արհեստագործությունը երկրագործության հետ էր միացած և նրա հավելումն էր, ուստի նրա ազատ զարգացումը կաշկանդվում էր որոշակի շրջանակներում։ Այս հանգամանքը արհեստագործությանը, որպես տնտեսական արդյունավետ գործոնի, հաղորդում էր ֆեոդալական երևույթին ներհատուկ գծեր։ Աշխատելով գյուղում, արհեստավորը, որպես գյուղահամայնքի անդամ, որոշակի պարտավորություններ ուներ ֆեոդալ-հողատիրոջ նկատմամբ. նա բնավ չէր կարող խուսափել ֆեոդալական կամայականություններից ու ՀԸնդումներից։ Միաժամանակ հարկ է նշել, որ երկրամասի քաղաքներում առկա էին երկրագործությունից արհեստագործության անջատման սաղմնային ձևերը։ Մատենագիրների մոտ հաճախ ենք հանդիպում այնպիսի հասկացությունների, որոնք ցույց են տալիս արհեստագործական արտադրության այս կամ այն բնագավառի առկայությունը։ Այդ տվյալները թույլ են տալիս կարծելու, որ արհեստագործությունը քաղաքներում հետզհետե վեր էր ածվում տնտեսության ինքնուրույն բնագավառի. դրան մեծապես նպաստում էր առևտրի ոլորտի հարաբերական ընդլայնումը, որի շնորհիվ արհեստագործական արտադրանքը ապրանքայնանում և հասնում էր իր սպառողին։ Իհարկե, Վասպուրականի ներքին շուկայում գերակշռում էին գյուղատնտեսական ապրանքները։ Նույնիսկ հետագայում՝ XI դարում այս դրությունն էր իշխողը[1]։ Փաստորեն երկրամասի տնտեսական կյանքում հիմնական նշանակություն ուներ երկրագործական ապրանքների շուկայական փոխանակությունը։ Սակայն քաղաքի և գյուղի միջև աշխատանքի բաժանման առկայության փաստն ինքնին նշանակում էր, որ արհեստագործությունը բաժանվում է գյուղատնտեսությունից։ Գյուղացիներն ստիպված էին շուկայից գնել քաղաքի արհեստավորների արտադրած ապրանքները։ Փաստորեն աշխատանքի բաժանումը ավելի էր մերձեցնում հասարակական այս երկու օրգանիզմները։ Այդ պայմաններում քաղաքը շարունակում էր մնալ որպես ֆեոդալական երևույթ։ Իհարկե, աղբյուրների կցկտուր տվյալների հիման վրա հնարավոր չէ ՀՀշտիվ վեր հանել քաղաքային և գյուղական արհեստագործության իրական ոլորտները։ Կարելի է մոտավորապես կռահել, որ շուկաներում գերիշխողը մանրածախ առևտուրն էր, որի մեջ զգալի էր քաղաքների արհեստագործական արտադրանքի բաժինը։

Խալիֆայության լծի թոթափման հետևանքով Վասպուրականի իշխանությունում որոշակի զարգացում ապրեց նաև արհեստագործությունը։ Նրա վերածնված քաղաքները թեև փոքր էին, սակայն դարձան արհեստագործության ու առևտրի երևելի կենտրոններ[2], որտեղ գերակշռում էր արհեստավո-

---

[1] Насир-и Хусрау. Сафар-намэ. Книга путешествия. Пер. Е. Бертельса. М.—Л., 1933, с. 38.

[2] *Այս փաստից հետևում է, որ միջնադարում փոքր քաղաքը ևս կարող էր դառնալ տնտեսական զարգացման, քաղաքակրթական արժեքների կենտրոն։*

ական և առևտրական խավը։ Սակայն աղբյուրների տվյալներից չի երևում, որ Վասպուրականի քաղաքներում եղած լինեն արհեստավորների ու վաճառականների առանձնացված թաղամասեր։ Իհարկե, ֆեոդալական քաղաքի ձևավորման հետ մեկտեղ տեղի էր ունենում արհեստագործական արտադրության որոշ մասնագիտացում։ Վասպուրականի իշխանությունում նրա դերն այնքան կարևոր էր, որ Արծրունյաց պատմագիրը, որպես կարևորագույն հասարակախավերի, երկրագործներին և արհեստավորներին հիշատակում է միասին[3]։ Ընդսմին հետզհետե ավելանում էր քաղաքի արհեստագործ բնակչությունը։ Անշուշտ, քաղաքում արհեստագործական արտադրության առկայությունն ինքնին հայտանշում էր արհեստի անջատումը երկրագործությունից, որը չէր խոչընդոտվում քաղաքի տեր ֆեոդալի կողմից, քանի որ արհեստից ևս նա հասույթներ էր կորզում։ Այստեղից էլ Արծրունյաց իշխանի կողմից արհեստագործությունը խրախուսելու պարագան։ Քաղաքի արհեստավորը ուներ սեփական տնտեսություն, տնօրինում էր արտադրության իր միջոցները, արտադրանքը, մի խոսքով դառնում էր ազատ արտադրող, որի շնորհիվ բարձրանում էր արտադրանքն ավելացնելու նրա շահագրգռվածությունը, խթանվում էր արհեստագործության զարգացումը։ Պրոֆեսիոնալ արհեստավորները՝ վարպետները, ունեին իրենց աշակերտները։ Այս տեսակետից հետաքրքիր է, որ մի ձեռագրում վարպետների հետ Վասպուրականում հիշվում են նաև նրանց աշակերտները[4]։

Արհեստավորի գոյությունը պայմանավորված էր նրա արտադրածի իրացմամբ։ Այս հանգամանքը արհեստավորին ստիպում էր անձամբ վաճառել իր արտադրածը։ Ուստի պետք է կարծել, որ Վասպուրականում արհեստավորի գործունեությունը միաժամանակ թե՛ արտադրավայր էր և թե՛ արտադրածը վաճառահանելու սկզբնակետ։ Ուշագրավ է, որ Խորոնի Անձևացին գրում է, թե «...զոր ինչ վաճառէ..., էր կամք անձին զգործս վաստակոյ»[5]։ Անշուշտ, մատենագիրն այստեղ ի նկատի ունի նաև քաղաքի արհեստավորներին։ Այս փաստը վկայում է, որ Վասպուրականում արհեստավորի կողմից տեղական շուկաներում սեփական արտադրանքի վաճառահանումը այնքան տարածված ու սովորական երևույթ էր, որ չէր կարող չարտացոլվել ժամանակի մատենագիրների երկերում։ Շուկայում արհեստավորի արտադրանքի իրացումը միաժամանակ ցույց է տալիս, որ շուկան արդեն պահանջարկ էր ներկայացնում արհեստավորական արտադրանքի նկատմամբ։ Ֆեոդալական իրավահայեցողությամբ քաղաքները առավելություն ունեին շենների նկատմամբ, քաղաքաբնակները՝ գյուղաբնակների[6]։ Սա վկայում է նաև քաղաքացիների զբաղմունքի՝ արհեստագործության կարևորության մասին։

Վասպուրականում զարգացած էին երկրագործությունից հիմնականում անջատված արհեստագործության զանազան ճյուղեր՝ մետաղագործությունը իր տարբեր ճյուղերով, ջուլհակությունը, ոսկերչությունը, կաշեգործությունը, հյուսնությունը, բրուտությունը և այլն։ Թե՛ գյուղում և թե՛ քաղաքում հույժ կենսական նշանակություն ուներ դարբնությունը։ Պատահական չէ, որ «դարբնության» տակ լայն իմաստով հասկացվում էր մետաղագործական արհեստների զգալի մասը։ Դարբնի աքցանը և կռանը հիշատակում է Արծրունյաց պատմիչը[7]։ Աներկբա է, որ Վասպուրականում դարբնության տեխնիկայի մեջ կիրառվել է երկաթը կռելը, կոփելը (Գրիգոր Նարեկացին հիշում է դարբնի սալը)[8]։ Կիրառվել է նաև զոդումը, որի համար անհրաժեշտ նյութեր (բորակ և հատուկ տեսակի ավազ՝ գայլախազ) կային Վասպուրականում։ Զո-

---

3 Թովմայի Արծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց. Թիֆլիս, 1917, III, ԻԹ, էջ 429։

4 Մաշտոցի անվ. Մատենադարան (ՄՄ), ձեռ. № 5467, էջ 12 ա։

5 Նույն տեղում, ձեռ. № 2607, էջ 48 ա։

6 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխ. Մ. Աբեղեանի և Ս. Հարությունեանի. Տփխիս, 1913, Բ, ը, էջ 117—118։

7 Թովմա Արծրունի, I, Գ, էջ 63։

8 Գրիգոր Նարեկայ վանից վանականի Մատենագրութիւնք. Վենետիկ, 1840, էջ 164։

գելու միջոցով էին պատրաստում երկրագործական գործիքները, զենքերը և այլն։ Վասպուրականում ձուլման համար օգտագործել են հալոցարաններ։ Դրիգոր Նարեկացու մոտ հանդիպում ենք «քրայս հալոցաց սաստիկ եռացմամբ»՝ դարձվածքին, որի տակ նկատի են առնվում հալոց-քուրաները։ Մատենադրի «ի քրայս հրակիր որովայնին ձուլեաց»[10] արտահայտությունը ևս այդ մասին է վկայում։

Զոդման, ձուլման հանգամանքն ինքնին հարկադրում էր ծանոթ լինել իրերի հատկություններին։ Այս տեսակետից ուշագրավ է, որ Խոսրով Անձևացին նշում է տեխնիկական իրերի հատկությունները։ Նրան հայտնի էին զանազան մետաղների՝ երկաթի, ոսկու, արծաթի, անագի, կապարի հատկությունները[11]։

Ֆեոդալիզմի պայմաններում կարևոր նշանակություն ուներ փականագործությունը, որը հետևանք էր քաղաքային կյանքի զարգացման, դրամաշրջանառության ընդլայնման, գանձ, մեծագին ապրանքներ պահելու անհրաժեշտության[12]։ Որսորդության, ձկնորսության զարգացումը կյանքի էր կոչում վարմերի (ցանցերի), շղթաների և անհրաժեշտ այլ իրերի արտադրությունը (Դրիգոր Նարեկացու մոտ հանդիպում ենք վարմերի, ցանցի հիշատակության[13])։ Վասպուրականում հույժ կարևոր նշանակություն ուներ զինագործությունը։ Անջատվելով դարբնությունից, այն զարգանում է օտար հրոսակների դեմ մղած կռիվների պատճառով։ Ճիշտ է, զինագործությունը մասսայական արհեստ չդարձավ, սակայն աղբյուրների ընձեռած տվյալները հիմք են տալիս կարծելու, որ զինագործ արհեստավորները բավականին մասնագիտացել էին իրենց արհեստում։ Ընդ որում զենքի որոշ տեսակներ պատրաստվում էին պողպատից։ Թովմա Արծրունու վկայությամբ Դերենիկ Արծրունին ուներ պողպատե սուր[14]։ Զենք պատրաստելու համար բացառիկ նշանակություն ուներ Ռշտունիքի երկաթահանքերի շահագործումը։ Երկաթի արդյունահանումը և ձուլումը հատուկ հալոցարաններում, հնարավորություն էր ընձեռում տեղում զենք կոել։ Վասպուրականի մատենագիրների երկերում հիշվում են զենքի, զինահանդերձանքի տարբեր տեսակներ[15]։ Բազմապիսի զենքերի առկայությունն, անշուշտ, պայմանավորված էր վասպուրականցի արհեստավորների հմտությամբ, այլև նույն արհեստի ներսում աշխատանքի բաժանմամբ։ Վասպուրականը մաքառումների մեջ էր ժամանակի հզոր և մարտունակ բանակների դեմ։ Դա հարկադրում էր կատարելագործել զինագործության տեխնիկան։ Այլ կերպ հնարավոր չէր Վասպուրականի իշխանության գոյությունը։

Վասպուրականում զարգացած էր նաև պղնձագործությունը, որը կարևոր դեր ուներ երկրի տնտեսական կյանքում, քանի որ բավարարում էր բնակչության առօրեական պահանջները։ Պղինձն օգտագործվել է նաև կապարի հետ

---

9 Նույն տեղում, էջ 63։

10 Նույն տեղում, էջ 487—488։

11 ՄՄ, ձեռ. № 2607, էջ 34 ա։ Խոսրով Անձևացի. Մեկնութիւն ժամակարգութեան. Օրթագիւղ (Կ. Պոլիս), 1840, էջ 205։

12 Բ. Ն. Առաքելյան. Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում. հ. 1, Երևան, 1958, էջ 139—140։

13 Գրիգոր Նարեկացի, էջ 105։

14 Թովմա Արծրունի. III, ԻԹ, էջ 425։

15 Խոսրով Անձևացին հիշատակում է սաղավարտը, զրահը (ՄՄ, ձեռ. № 8343, էջ 27 բ), վահանը (ձեռ. № 2607, էջ 8 բ)։ Գրիգոր Նարեկացին հիշում է «քառասայր» նետասլաքը (Մատենագրութիւնք, էջ 393), այլ առիթով՝ նետ ու աղեղ և կապարճ (նույն տեղում, էջ 170, 441), սուսեր, թունավոր նետասլաքներ (նույն տեղում, էջ 63, 452)։ Թովմա Արծրունին հիշում է մետաղից պատրաստած զենքի մի քանի տեսակներ՝ սուսեր, թուր, սուր, վաղր, տապար, սվին, նիզակ, տեգ, վահան, սաղավարտ, զրահ, նաև նետ ու աղեղ և այլն (II, Զ. էջ 186. Բ, էջ 220—221. Դ, էջ 241, IV, Գ, էջ 467 և այլն)։

միասին, իհարկե հալելու և միմյանց հետ խառնելու միջոցով։ Ուշագրավ է, որ Թովմա Արծրունու շարունակողը հիշում է «զհալուածս կապարի և պղնձոյ ընդ միմեանս խառնեալ»[16]։ Վասպուրականցի արհեստավորները պղնձից պատրաստում էին բազմապիսի առարկաներ, որոնց մասին հիշատակություններ կան տեղացի մատենագիրների մոտ[17]։ Պղինձը երկաթի ու կապարի հետ օգտագործվում էր նաև շինարարության մեջ[18]։

Վասպուրականում բարձր կատարելագործման էր հասել նաև ոսկերչությունը, որը հինավուրց ու մեծահարգ արհեստներից էր։ Ինչպես երևում է մատենագրական տվյալներից, ոսկուց ու արծաթից առարկաներ պատրաստելիս օգտագործվել են տեխնիկական այլևայլ միջոցներ՝ ոսկեզօծելը, արծաթաջրելը, ընգելուզելը, դրվագելը և այլն։ Նույն այդ տվյալներից ելնելով, կարելի է կարծել, որ վասպուրականցի արհեստավորները մասնագիտացված հալոցարաններում ստացել են ոսկի և արծաթ[19]։ Այս տեսակետից հետաքրքիր է, որ Գրիգոր Նարեկացին արծաթագործի քուրան օգտագործում է որպես համեմատության միջոց և դիմելով «երկնաւոր արծաթագործին» գրում է. «Իբր ի քրայս ընտրութեան ... հանապազ եռամ և ոչ երբեք պարզիմ, միշտ խառնիմ զուգիլ և ոչ ևս միանամ»[20]։ Իսկ Թովմա Արծրունին նշում է, որ «զուտ և վճիտ արծաթ» կարելի է ստանալ «ի բովս հալոցեացն»[21]։ Զարգացման որոշակի աստիճանի էր հասել նաև դրվագման տեխնիկան։ Ռըշտունյաց Ոստան քաղաքի եկեղեցում պահվող խաչը դրվագված էր արծաթով՝ «արծաթեղինաւն զփայտեղենն պատեալ արտաքուստ»[22]։ Գագիկ Արծրունի իշխանը հրամայում է՝ «ածել ոսկերիչս» և նորոգել է տալիս խաչը՝ «պատեալ մաքուր արծաթով, վայելչագոյն, քան զառաջինն...»[23]։ Դրվագման տեխնիկան օգտագործվել է նաև եկեղեցական սպասների, նույնիսկ սյուների ոսկեզարդման համար։ Ատոմ Անձևացի իշխանին Արամ մատենագրի հղած թղթում հիշվում են «դրուագեալ զսիւնսն և զսպաս տաճարին[24]։ Հաճախ ոսկերչական տեխնիկան անբաժան էր իրերը թանկագին քարերով ընդելուզելուց։ Գուրգեն Արծրունի իշխանի կառուցած եկեղեցին «հրաշազարդեալ մեծագանձ սպասիւք ոսկեկերտ խաչադրոշեալ ընդելուզեալ մարգարտով և ակամբք պատուականօք հրաշագործեալ»[25]։ Թանկագին քարեր

---

16 Թովմա Արծրունի, IV, է, էջ 481։

17 Գրիգոր Նարեկացին հիշում է բազմականթեղ («բազմարերանեան») աշտանակներ (Մատենագրութիւնք, էջ 114), որոնք, անշուշտ, պատրաստվել են պղնձից։ Նա հիշում է նաև կաթսա («զղուր կաթսայից ի հրոյ եռացեալ» նույն տեղում, էջ 161), կանթեղ, զամբար (լապտեր), սկուտեղ (նույն տեղում, էջ 310, 454, 533, 362) և այլն, որոնք ևս պղնձից էին պատրաստվում։ Ուշագրավ է, որ Գրիգոր Նարեկացին ոսկին, արծաթը և պղինձը դնում է կողքկողքի և ընդգծում դրանց կարևոր նշանակությունը (ՄՄ, ձեռ. № 3676, էջ 75 ա)։ Պղնձից կենցաղային իրեր են հիշում նաև Վասպուրականի մյուս մատենագիրները։ Օրինակ, Խոսրով Անձևացին հիշում է մատուցարան (ձեռ. № 2607, էջ 180 բ), Անանիա Նարեկացին՝ լապտեր (ձեռ. № 3391, էջ 177 բ) և այլն։

18 Գրիգոր Նարեկացի, էջ 453, 458—459. ՄՄ, ձեռ. № 3320, էջ 5 ա։ Անագի, կապարի հիշատակություն կա նաև Խոսրով Անձևացու (ձեռ. № 2607, էջ 127 ա) և Հակոբ Նարեկացու մոտ (ձեռ. № 4067, էջ 3 բ)։

19 Գրիգոր Նարեկացի. էջ 177։ Խոսրով Անձևացի. Մեկնութիւն աղօթից պատարագին. Վենետիկ, 1869, էջ 59։

20 Գրիգոր Նարեկացի, էջ 177։

21 Թովմա Արծրունի, III, ԻԷ, էջ 392։

22 Նույն տեղում։

23 Նույն տեղում, էջ 393։

24 ՄՄ, ձեռ. № 3710, էջ 320 ա։

25 Թովմա Արծրունի, III, ԻԹ, էջ 412։ Պատմիչը հիշում է իրեր՝ «արծաթեղինօք և ընտիր և փորձ արծաթագործ դրոշածօք» (նույն տեղում, էջ 405), Գրիգոր Նարեկացին՝ «ոսկի ընդ արծաթ պատուական քարամբք» (Մատենագրութիւնք, էջ 462)։

ձեռք բերելու համար նույնպես հմտություն, գիտելիքներ էին պահանջվում։ Անանիա Նարեկացու քարոզներից մեկում հիշվում է «գեղեցիկ և ծանրագին» մարգարիտը[26]։ Հետաքրքիր է, որ Գրիգոր Նարեկացին գրում է. «Ոչն յեռեալ ժողովէ յինքն զպէսպէս զանազանութիւն գեղոց մարգարտաց»[27]։ Ի դեպ՝ ժամանակակիցները Վանա լիճը համարում էին թանկարժեք քարերի շտեմարան։

Արհեստագործները առաջին հերթին պատրաստում էին այնպիսի իրեր, որոնք պատշաճում էին ազատանու ճաշակին։ Թովմա Արծրունու շարունակողի վկայությամբ, Դերենիկ Արծրունին ուներ «բազմերանգ բազմականս ոսկեզարդ գահոյից»[28], որն անշուշտ, պատրաստված էր դրվագման եղանակով[29]։ Նրա կին Սոփին կրում էր «զպատուադիր քողն մարգարտահիւս զարդուն[30]։ Նույնն ենք տեսնում նաև Վասպուրականի մյուս իշխանների մոտ։ Ուսկերչական տեխնիկան լայնորեն կիրառվում էր նաև վանքերը, եկեղեցիները, ապարանքները զարդարելու համար։ Թովմա Արծրունու շարունակողը հիշում է «ոսկեզարդ գահոյք»[31], որոնք, անշուշտ, պատմիչը տեսել էր Վասպուրականում։ Նույն մատենագիրը նշում է «արծաթապատ» դռները, «ոսկեհուռ» և «մարգարտահյուս» զարդերը և այլն[32]։ Ոսկերչությունը պահանջում էր արվեստագետի հմտություն։ Ընդհանրապես ոսկերչի արտադրածը հարդի էր։ Ավանդական վաղեմությամբ ու բարդությամբ թերևս ոչ մի արհեստ չէր կարող մրցել ոսկերչության հետ։ Վերջինիս բարձր զարգացման, կատարելագործված լինելու պատճառով էր թերևս, որ Գրիգոր Նարեկացին արարչին անվանում է «երկնաւոր արծաթագործ»[33]։ Ոսկերչի արտադրանքը մեծարժեք էր նաև այն պատճառով, որ այն բարդ էր և նրանով զբաղվող արհեստավորը հարկադրված էր ավելի երկար կատարելագործվել։ Ոսկու, արծաթի հումքը ձեռք էին բերում գահերեցի, իշխանների միջոցով, քանի որ ոսկին, արծաթը գահերեցի, երբեմն նաև իշխանների մենաշնորհն էր։

Վասպուրականի տնտեսական զարգացման կարևոր ցուցանիշներից մեկը երկրում ծավալված շինարարական աշխատանքներն էին, որոնք կատարվեցին Վանում, Ոստանում, Աղամակերտում, Գետն ավանում, Մահռաշտ գյուղում, հետագայում Աղթամարում և այլուր։ Բարձր զարգացման հասան շինարարական արհեստները։ Որովհետև շինարարական գործերը կատարվում էին իշխանների կամքով, ուստի դառնում էին պետական կարևորություն ունեցող միջոցառումներ։ Վերջիններս դիտվում էին նաև որպես Մեծ իշխանի օգտին կատարվող աշխատանք։ Շինարարության համար նախապես կազմվել է ընդհանուր նախագիծ կամ նկարագրություն, որի հիման վրա կառուցվել է շինությունը։ Այս նպատակով հաճախ նախապես կերտել են կառուցվելիք շինության մակետը կամ գծագիրը[34]։ Թովմա Արծրունու շարունակողը դրում է, որ Գագիկ Արծրունին «հանդերձ բազում արուեստաւորօք զլար ճարտարութեան ի ձեռն առեալ գծել, միանգամայն և գծագրել նշանակել...»[35]։ Ամեն մի շինարարություն զարկ էր տալիս իր հետ առնչվող արհեստներին։ Հատկապես զարգանում էր քարգործությունը։ Վասպուրականը քարից հարուստ չէր, բայց Ռշտունիքում, Աղթամար կղզու հանդիպակաց ափին գտնվող

---

20 ՄՄ, ձեռ. № 3391, էջ 161 ա։

27 Գրիգոր Նարեկացի, էջ 341։ Նովային մարգարիտը հիշում է նաև Անանունը (Թովմա Արծրունի, III, ԻԹ, էջ 423)։

28 Թովմա Արծրունի, III, ԻԹ, էջ 429։

29 Տե՛ս Բ. Ն. Առաքելյան. նշվ. աշխ., Ա, էջ 174։

30 Թովմա Արծրունի, III, ԻԹ, էջ 428։

31 Նույն տեղում, IV, է, էջ 481։

32 Նույն տեղում, Ը, էջ 487։

33 Գրիգոր Նարեկացի, էջ 177։

34 Թովմա Արծրունի, IV, Բ, էջ 450։

35 Նույն տեղում, IV, է, էջ 480։ Գրիգոր Նարեկացուն վերագրվող մի ներբողականից (Մատենագրություն, էջ 450) նույնպես երևում է, որ շենքը կառուցելուց առաջ կազմվել է գծագիր։

Քառն Մանակերտ հրվանդանը ուներ քարի մեծ պաշարներ։ Թովմա Արծրունին գրում է, թե Վասպուրականի իշխանությունում կատարվող շինությունների համար քարը բերվում էր իբր Մանավազյան (Մանազկերտ) քաղաքից[36]։ Սակայն անիմաստ կլիներ քարը բերել Մանազկերտից, որը ոչ միայն հեռու էր Վանից, Ոստանից և դուրս էր Վասպուրականից, այլև գտնվում էր մահմեդական ամիրաների ձեռքում։ Ըստ երևույթին, պատմիչը նկատի ունի Մանակերտը, որը մոտ էր ու հարմար և ենթարկվում էր Արծրունիներին։ Վկայված է նաև, որ Գագիկ Արծրունին շինաքար է բերել նաև Աղձնիքի Կոտոմ գյուղի մոտակայքից, այն գրավելուց հետո[37]։ Ըստ երևույթին Կոտոմից (որը նույնպես հեռու էր) քար չի բերվել, քանի որ դրանք տեղափոխելը դժվար կլիներ[38]։ Մանակերտի և ուրիշ քարհանքներում հատված քարը տաշվում էր, նոր ապա վաճառվում։ Թովմա Արծրունու հավաստմամբ, շինաքարերը բերվել են տաշած վիճակում, «սայլիցն հոլովմամբ»[39]։

Շինարարության մեջ քարի օգտագործումը զարկ տվեց նաև քարակոփությանը։ Երկրի տնտեսական կյանքում հետզհետե մեծանում է քարի, այն մշակող աշխատավորի դերը։ Բնականաբար, մեծ կարևորություն են ստանում նաև քարհանքերը, որոնց տիրողը ձեռք էր բերում մեծ եկամուտ։ Վերջինից (բացի քարհատներին հասնող բաժնից) մասհանում էր կատարվում նաև Արծրունյաց գահերեցի, ինչպես նաև տվյալ գավառի տիրոջ օգտին[40]։ Շինարարության մեջ քարից բացի օգտագործվել են կիրը, ավազը[41]։ Գրիգոր Նարեկացին որպես շինանյութ հիշում է նաև երկաթն ու պղինձը[42] (երկաթը որպես այդպիսին հիշում է նաև Թովմա Արծրունու շարունակողը)[43]։

Երկրի պաշտպանության համար կարևոր էր հատկապես բերդաշինությունը։ Ուշագրավ է, որ «Սասնա ծռերում» հիշատակվում է Վան քաղաքում կատարված բերդաշինությունը[44]։ Հավանաբար, շինարար արհեստավորները լավ են վարձատրվել[45] (հատկապես սրբատաշ քարերով շինությունների համար)։ Աղթամարի վանքի պատերին եղած նշաններից երևում է, որ վանքը կառուցող վարպետները, ինչպես դա կատարվել է Հայաստանի մյուս նահանգներում, վերցրել են կառույցի առանձին տեղամասեր և կատարել նրա շինությունը։ Ինչպես ցույց է տվել Թ. Թորամանյանը, շինարար վարպետների

---

36 Թովմա Արծրունի, III, ԻԹ, էջ 412։

37 Նույն տեղում, IV, Ը, էջ 484։

38 Գուրգեն Արծրունին «հարուստ մի հեռի զքարանցն տաշելոյ ... բերելով ... իբրև ասպարիսօք երիւք» (Թովմա Արծրունի, III, ԻԹ, էջ 411), Ադամակերտում կառուցում է եկեղեցի։

39 Թովմա Արծրունի, III, ԻԹ, էջ 411։

40 X դարում Բյուզանդիայում ընդունված մի օրենքի համաձայն, որևէ ֆեոդալի տիրույթում եղած քարհանքից հանված քարի 1/10-ը պատկանում էր արքունիքին, 1/10-ը՝ տվյալ հողատարածքի տիրոջը, մնացածը մնում էր քարհատ վարպետներին։ Հիշյալ օրենքի նպատակն էր ոչ միայն խրախուսել քարհատներին, այլև հատուցել երկրագործության համար սակավ պիտանի հողերի տերերին (տե՛ս այս մասին՝ М. Я. Сюзюмов. Экономика пригородов византийских крупных городов.—Византийский временник, т. XI, 1956, с. 68).

41 Թովմա Արծրունի, III, ԻԹ, էջ 406, IV, է, էջ 481։ Ըստ մի ավանդազրույցի, Դատվանի ծովեզերքից ուղտերով ավազ են տեղափոխել շինարարության համար (Ա. Ղանալանյան. Ավանդապատում. Երևան, 1969, էջ 72)։ Վասպուրականում որպես շինանյութ օգտագործվում էր նաև կավը (տե՛ս Գրիգոր Նարեկացի, էջ 4)։ Մի ավանդազրույցի համաձայն, Վասպուրականում կավահողը շինավայր են տեղափոխել ուղտերով (Ավանդապատում, էջ 73)։

42 Գրիգոր Նարեկացի, էջ 5։

43 Թովմա Արծրունի, IV, է, էջ 482։

44 Սասնա ծռեր. հ. Բ, մասն 1-ին, Երևան, 1944, էջ 60։ Ավանդազրույցներում նշվում է, որ Հարավային Հայաստանում բերդերի շինարարությանը մասնակցել են նաև կանայք (Ավանդապատում, էջ 67)։

45 Թովմա Արծրունի, IV, Զ, էջ 475, է, էջ 480։

կառուցած տեղամասը նշվում էր առանձին նշաններով և ըստ այդմ էլ վճարվում կատարված աշխատանքի վարձը[46]։ Մատենագրական տվյալներից երևում է, որ արհեստավորներն ունեին իրենց հսկողները («ոստիկանք») և աշխատանք հաշվառողները[47]։

Շինարարության շնորհիվ հաճախ արհեստը ծնում էր արվեստի գլուխգործոցներ, զարկ տալիս քանդակագործությանը, որմնանկարչությանը։ Շինարարությունը զարկ էր տալիս նաև ապակեգործության զարգացմանը։ Թովմա Արծրունին հիշում է «մաքուր յապակի զուտ և վճիտ»[48]։ Ոստանի պալատն ուներ «լուսանցոյցս շողախաղացս», որոնք արևից «փայլատակելով ... շող գործեն ի սիրտս տաճարին»[49], Խոսրով Անձևացին հիշում է «զապակի և զհայելի ջինջ և յստակ»[50], Անանիա Նարեկացին՝ «թանձր ապակի»[51] և այլն։ Իհարկե, ապակու, հայելու գործածությունը տարածված չէր ստորին, նույնիսկ միջին խավերի մեջ, քանի որ այն ձեռք բերելը շատ թանկ էր նստում։

Քաղաքացիական շինությունների մեծ մասը երկար չէր դիմանում։ Խոսրով Անձևացին գրում է, որ «թուլացեալ լինին նիւթք շինուածոցն և խարխլել կազմուածք շարադրութեանն յերկարաձգութեանն ամաց, և ոչ զօրեն ի վեր ունել զծանրութիւն յարկացն. այլ խոնարհեալ իջանին և բազմաց մահ գործին»[52]։

Վասպուրականում որոշակի մակարդակի էր հասել նաև ջրմուղաշինությունը։ Գագիկ Արծրունի իշխանը, հավաստում է պատմիչը, «պատրաստեաց ջրմուղ ներքսագոյն երկրի ի քարանց տաշելոյ»[53]։ Այս ջրմուղը, ձգվելով Վարագա լեռան ստորոտից, հարավից թեքվում էր հյուսիս և հասնում Վան-Տոսպ։ Որովհետև ջուրն սկիզբ էր առնելու բարձր տեղից, ուստի գերադասվել է ջրատարը կառուցել ոչ թե կավե փողրակներից (որոնք չէին կարող դիմանալ ջրի բարձր ճնշմանը), այլ քարից։

Շինարարական աշխատանքների հետ կապված զարգանում էր նաև ատաղձագործությունը, որը ինչպես և դարբնությունը, հնագույն և հույժ կարևոր արհեստներից էր։ Ատաղձագործության միջոցով էին արտադրվում երկրագործի գործիքները, տնային կահավորանքը, կառուցվում էր տունը և այլն[54]։ Հյուսնության շնորհիվ զարգանում էին նաև սայլաշինությունը, կառագործությունը։ Սայլը լայն կիրառություն ուներ երկրում (այն քանիցս հիշում են վասպուրականցի մատենագիրները)։ Իսկ կառքը գործ էին ածում ընչավետ գերդաստանները, հազվագյուտ՝ նաև ռամիկը (հարսանյաց և այլ օեսերի ժամանակ)[55]։

---

46 Թ. Թորամանյան. Նյութեր հայկական ճարտարապետության պատմության. Ա, Երևան, 1942, էջ 268։

47 ՄՄ, ձեռ. № 5467, էջ 14 ա։

48 Թովմա Արծրունի, I, Գ, էջ 64։

49 Նույն տեղում, IV, Զ, էջ 477։

50 Խոսրով Անձևացի. Մեկնութիւն ժամակարգութեան, էջ 103։

51 ՄՄ, ձեռ. № 3320, էջ 5։ Հայաստանում տեղական ապակեգործության առկայությունը վկայված է պեղածո ապակե իրերի (հատկապես Դվինի՝ IX—X դդ. շերտերից հայտնաբերված) առկայությամբ (տե՛ս այս մասին՝ Հ. Մ. Ջանփոլադյան. Դվինի ապակե իրերի ժողովածուն.— «Պատմա-բանասիրական հանդես», 1966, № 1, էջ 262—263)։

52 Խոսրով Անձևացի. Մեկնութիւն ժամակարգութեան, էջ 254։

53 Թովմա Արծրունի, III, ԻԹ, էջ 406։

54 Հյուսնի գործիքներից հիշվում են սղոցը, ձեռնուրագը, քանոնը և այլն։ Գրիգոր Նարեկացին հիշում է նաև «սեւեռք», որի տակ ի նկատի ունի անշուշտ մեխը (Մատենագրութիւնք, էջ 170)։

55 Խոսրով Անձևացին մի առիթով նշում է. «կառաւարն զկառաւիգսն ուղղէ և շտայ թոյլ խոտորել ի պղոտայէն» (Խոսրով Անձևացի. Մեկնութիւն աղօթից պատարագին, էջ 50), որից պետք է հետևեցնել, որ կառքը հիմնականում օգտագործվել է պղոտաներում, իմա՝ բանուկ, խնամվող ճանապարհներում։ Կառքը հիշում է նաև Գրիգոր Նարեկացին (Մատե-

Ատաղձագործությունը զարկ էր տալիս նաև նավաշինությանը։ Զարգացած էր նավագնացությունը. այս մասին վկայված է աղբյուրներում[56]։ Կային նաև առագաստավոր նավեր (մարդատար և բեռնատար)։ Նավաշինության վերաբերյալ հետաքրքիր տվյալներ կան Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկում, ուր նկարագրվում է խորտակվող նավը, որն անշուշտ հեղինակը տեսել էր անձամբ։ Նկարագրվող նավն ունեցել է շքեղ շինվածք։ Այն կառուցելիս առաջին հերթին իրար են կցորդել երկու գերաններ՝ ստեղծելով խարիսխ։ Նավն դնեցել է ամուր ողնափայտ, նրա զիստը ամրացվել է ամուր կապարաններով։ Այն ունեցել է նաև հարմար նավագոգ։ Ետնակողմը եզերված է եղել նավաշրթներով։ Նավի վրա եղել են ղեկ, ուղղիչներ, տախտակամածում՝ միմյանց կցված տախտակաշարքեր։ Նավի վրա կային բազմոցներ, վանդակապատ գահավորակներ։ Գլխակողմի բարձրադիր մասում էր դիտարանը։ Նավը երկուստեք ունեցել է թիաշարքեր, վերամբարձ կայմ, առագաստ՝ ամրացված ձիգ առասաններով[57]։ Այս վկայությունից, երևում է, անշուշտ, ատաղձագործական արհեստի՝ ժամանակի համեմատ բարձր զարգացումը։

Մատենագրական աղբյուրներում վկայված է նաև խեցեգործության առկայությունը Վասպուրականում։ Այն ևս հին ժամանակներից զարգացած էր երկրում։ Խեցեղեն ամանները ստացել են կավից՝ թրծմամբ[58]։ Գրիգոր Նարեկացին հիշում է խեցեգործի ճախարակը, գրելով. «Ճախարակեալ անօթք ամենևին զտեալ և մաքրեալ են ի զաղրութենէ և ի տգեղութենէ»[59]։ Վանա լճի շրջակայքի խեցեգործների արտադրանքը իր բարձր որակի շնորհիվ հրուշակված էր նաև ուրիշ երկրներում։ Այն արտահանվում էր։ Արաբ մատենագիր Իդրիսին վկայում է, որ Վանա լճի մերձակայքում եղած «կավի տեսակից պատրաստում են շրի շքեղ ամաններ, որն արտահանում են Իրաք, Ասորիք, Եգիպտոս։ Այն վաճառվում է թանկ գներով»[60]։

Վասպուրականի արհեստավորները հմուտ էին նաև զանազան տեսակի գործվածքեղեն, գորգեր արտադրելու բնագավառում։ Մետաքսից նուրբ զգեստների, թանկարժեք գործվածքների առկայության մասին վկայում են նաև օտար աղբյուրները։ Արաբ մատենագիրների հավաստմամբ, Հայաստանը հռչակված էր ոչ միայն իր գորգերով, այլև վարագույրներով, ծածկոցներով, բազմոցներով, բարձերով, զանազան թանկարժեք հյուսվածքներով[61]։ Շքեղահյուս գործվածքներ օգտագործող ֆեոդալական վերնախավը շահագրգռված էր երկրում ասեղնագործության զարգացմամբ։ Գրիգոր Նարեկացին Ապարանից խաչի պատմության մեջ գրում է, որ տոհմիկ և հարուստ անձինք

նագրությունք, էջ 339)։ Մի ձեռագրի վկայությամբ, Աղթամարի վանքի կառուցման առթիվ արված նավակատիքին Դագիկ Արծրունին ժամանել է կառքով (ՄՄ, ձեռ. № 5467, էջ 20 ա)։

56 Տե՛ս Եռսրով Անձևացի. Մեկնութիւն ժամակարգութեան, էջ 73, 212, 215։ ՄՄ, ձեռ. № 5467, էջ 20 ա։

57 Գրիգոր Նարեկացի, էջ 58։ Թովմա Արծրունին հիշում է առագաստանավեր (տե՛ս III, է, էջ 269)։

58 Գրիգոր Նարեկացին ունի «որպէս զթրծեալ ման խեցեղեն» արտահայտությունը (Մատենագրութիւնք, էջ 47)։ Թովմա Արծրունին (II, Զ, էջ 181) վկայում է, որ գանձերը պահվում էին կարասներում (իհարկե, կարասը հիմնականում գինի, երբեմն հացահատիկ ամբարելու համար էր)։

59 Գրիգոր Նարեկացի, էջ 326։ Արհեստագործությունը գերազանցապես շարունակում էր օգտվել տեխնիկական հնամենի միջոցներից։ Այս մասին տե՛ս Լ. Ս. Խաչիկյան. Արհեստագործության վիճակն ու զարգացման ասպիճանը Հայաստանում X—XIV դարերում.— ՀԽԱՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. գիտ.), 1958, № 3, էջ 38։

60 Geographie d'Edrisi. Trad. en francais par P. A. Jaubert. Paris, 1840, t. II, p. 328.

61 P. Hitti. History of the Arabs from the earliest times to the present. Edinburgh, 1970, p. 346.

հագնում էին «մեծագին և ոսկեթել վերարկու»[62] (այլ առիթով մատենագրի հիշատակած «ձեռաստեղծական վերարկուի ձորձոյ»[63] արտահայտությունը վերաբերում է անշուշտ ռամիկներին)։ Վասպուրականում մեծ նշանակություն ուներ գորգագործությունը։ Վերնախավի աճող պահանջմունքներով ստեղծվեցին մեծարժեք գորգեր, զգեստներ, զանազան հյուսվածքներ։ Ընդսմին IX—X դդ. շատ բարձր էին դասվում հայկական գորգերը։ Այդ մասին վկայում են արաբ մատենագիրները։ Մասուդին գրում է, որ արաբ խալիֆաներն իրենց և մերձավորների տները զարդարում էին հայկական գորգերով, կանայք՝ հայկական բարձերով[64]։ X դարի անանուն տաշիկ աշխարհագրողի վկայությամբ, Վասպուրականի քաղաքներում արտադրվել են «մեծ քանակությամբ գորգեր և այլ կարպետներ»[65]։ Նույն դարի արաբ մատենագիր Մուկադասին գրում է, որ Հարավային Հայաստանի (այդ թվում և Վասպուրականի) քաղաքներից արտահանվում էին նաև բրդյա կարպետներ, որոնք նշանավոր են և ունեն արժեքավոր հատկություններ[66]։ Թանկարժեք գործվածքներով զարդարվում էին նաև Վասպուրականի իշխանների պալատները, եկեղեցիները[67]։ Զգեստները ներկելու համար վասպուրականցի արհեստավորներն օգտագործել են կենդանական, հանքային և բուսական ներկեր[68]։

Մինչնադարյան Հայաստանի ազնվատոհմիկ անձանց նուրբ ու թանկարժեք զգեստների զգալի մասը պատրաստվել է տեղում, դրանց առկայությունը Վասպուրականում վկայված է սկզբնաղբյուրներում[69]։

Արհեստագործական արտադրության զարգացման համեմատաբար բարձր մակարդակը պահանջում էր արհեստավորի գործիքների կատարելագործում, քանի որ արհեստի բնագավառում անգնահատելի էր լավորակ գործիքների դերը։ Հատկանշական է, որ արհեստավորի գործիքները Վասպուրականում նկարագրանդակվել են դռների ճակատին։ Գրիգոր Նարեկացին գրում է. «Գործիքդ թող իմ դռան ճակատին ամրացվի» («ընդ բարաւոր գործի հաստիցի»)[70]։ Դռների ճակատին արհեստավորի գործիքներ քանդակելը ըստ երևույթին նպատակ ուներ պատվիրատուին հուշել, թե որն է իրեն անհրաժեշտ արհեստավորի «գործոց տունը»։ Այն միաժամանակ բարձրացնում էր արհեստագործի պատասխանատվությունը թե՛ մյուս արհեստավորների, թե՛ պատվիրատուների և թե՛ այն ֆեոդալի նկատմամբ, որի տիրույթում աշխատում էին արհեստավորները։ Վերջիններս մասնակցում էին ֆեոդալների ձեռնարկած կառույցներին և կատարում նրանց հրամանները։ Տվյալ իշխանի տիրույթի սահմաններում աշխատող արհեստավորը առաջին հերթին ենթարկվում էր նրա իրավասությանը։

Աղբյուրների կցկտուր տվյալներից երևում է, որ Վասպուրականում տրն-

---

62 Գրիգոր Նարեկացի, էջ 380։

63 Նույն տեղում, էջ 40։

64 Տե՛ս А.-Мец. Мусульманский ренессанс. М., 1973, с. 369.

65 Հ. Փափազյան. Անանուն տաշիկ աշխարհագիրը Հայաստանի, Ադրբեջանի և Արևվելյան Վրաստանի աշխարհագրության և տնտեսական հարաբերությունների մասին (X դար)։ ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1953, № 5, էջ 78։

66 Сборник материалов для описания местностей и племен Кавказа. Пер. Н. Караулов. Вып. XXVIII. Тифлис, 1908, с. 105.

67 Արծրունիների պալատի դռներին փակցված էր «ոսկեհուռն կամարաձև երանգոցն տարագր» (Թովմա Արծրունի, III, ԻԹ, էջ 428)։

68 Գրիգոր Նարեկացու մի ներբողականում հանդիպում ենք «ի խղխայթից խոտոց արմատոց՝ որդան կարմրութիւն դունեցանդ բարձից» (Մատենագրութիւնք, էջ 450), որից երևում է, որ բուսական կամ կենդանական ներկերով, ինչպես որդան կարմիրով, ներկել են բարձերը։ Որպես ներկանյութ, այն հույժ արժեքավոր էր և չէր դունագրկվում. Նարեկացու արտահայտությամբ՝ «ներկած որդան ի դոյն կարմրութեան անեղանելի» (Նույն տեղում, էջ 491)։

69 Տե՛ս Թովմա Արծրունի, II, Զ, էջ 188—191, III, Ը, էջ 279, ԻԹ, էջ 428, և ուրիշների մոտ։

70 Գրիգոր Նարեկացի, էջ 237։

տեսական մի քանի զբաղմունքներ ևս դիտվում էին որպես արհեստ։ Այդպիսի արհեստ-զբաղմունքներից էր ձիթհանությունը։ Ձեթն օգտագործում էին որպես կերակրայուղ, ինչպես նաև ճրագի համար[71]։ Կարևոր զբաղմունք էր նաև մեղվաբուծությունը, որի տեխնիկական միջոցները մասամբ նման էին այժմյանին[72]։ Մեղրից պատրաստում էին քաղցր խմիչք։ Բացի այդ, մեղվաբուծությունը մոմ էր տալիս եկեղեցուն (նաև բնակչությանը)՝ արարողությունների, ճրագի համար[73]։ Բնակչության սննդի հետ կապված արհեստ-զբաղմունքներից էին մսագործությունը, գինեվաճառությունը և այլն[74]։ Արհեստ էին համարվում նաև այգեպանությունը, պարտիզպանությունը։

Երբեմն «արհեստ» և «արվեստ» հասկացությունները միաձուլվում էին. արհեստ էին համարվում նաև արվեստի ոլորտի զբաղմունքները։ Նման արհեստներից էին վարձակությունը, գուսանությունը։ Հայտնի է, որ հայոց եկեղեցին անհաշտ պայքար էր տանում գուսանների և վարձակների դեմ։ Այդուհանդերձ, Վասպուրականում հաճախ ժողովրդական ծեսերն ուղեկցվել են թատերականացված խաղերով, երգասացությամբ կամ ողբասացությամբ, պարերով («երգս կատակերգութեան ջնարահար պոռնկի, յածեալ և կոծեալ քաջ հնչեցուցեալ ողբս....»)[75]։ Եկեղեցին դեմ էր թատերախաղերին, քանի որ դրանք շեղում էին ժողովրդի ուշադրությունը աղոթքից, եկեղեցական ծեսերից։ Ուստի Խոսրով Անձևացին թատերախաղերը դասում է կյանքի ամենահոռի երևույթների շարքում («...ի խարդախութիւն և ի կռիւս, ի խաղս և ի թատերս և ի ժողովս այլանդակս...»)[76]։

Արհեստ էին համարվում նաև ձկնորսությունը, ձկնամշակությունը[77]։ Վանա լճից որսացվող տառեխ ձուկը օգտագործվում էր նաև աղ դրած վիճակում, չորացվում և արտահանվում էր[78]։ Արհեստ էր համարվում նաև հանքագործությունը։ Վասպուրականում տնտեսական նպատակներով օգտագործել են զանազան հանքանյութեր։ Իբն-Հաուկալը գրում է, որ Վանա լճից արդյունահանվել է նատրիումի աղ, որն արտահանվել է Միջագետք՝ հացթուխների համար։ Վանա լճի մոտ, ըստ նույն հեղինակի, կային զառիկի (մկնդեղի) հանքեր, որտեղից արդյունահանվող կարմիր ու դեղին գույնի զառիկը նույնպես արտահանվել է[79]։ Արհեստ էր համարվում նաև նավավա-

---

71 Գրիգոր Նարեկացի, էջ 518։ Իր մի քարոզում Գրիգոր Նարեկացին գրում է. «ի պակասել իւղոյ շիջանին լապտերք... յոլովութիւն ձիթոյ պայծառացուցանէ զլապտերս» (ՄՄ, ձեռ. № 2546, էջ 243 ա)։ Խոսրով Անձևացու կարծիքով «զլապտերն առանց ձիթոյ» նման է անջուն արարածի (ձեռ. № 2607, էջ 32 ա)։

72 Գրիգոր Նարեկացին գրում է, որ «Տուխ զմեղուս ... փախուցանէ ...» (Մատենագրութիւնք, էջ 523)։ Թովմա Արծրունին հիշում է մեղվանոցները (III, ԻԹ, էջ 414)։

73 Մոմը հիշում է Գրիգոր Նարեկացին իր քարոզներից մեկում (ՄՄ, ձեռ. № 2546, էջ 244 ա)։

74 Տե՛ս Насир-и Хусрау. Указ. соч., с. 38.

75 Գրիգոր Նարեկացի, էջ 104։ Խոսրով Անձևացին դատապարտում է նրանց, ովքեր «իբրեւ թատերս զարէն կաքաւաց կարկաչեն» և ջնջում, որ «վասն ... ծաղրութեան պատիժ պատուհասի է ստուգապէս, յորժամ ի գոռս լինիցի» (ՄՄ, ձեռ. № 2607, էջ 26 բ)։

76 ՄՄ, ձեռ. № 2607, էջ 29 ա։

77 Վասպուրականի մատենագիրները՝ Խոսրով Անձևացի, Թովմա քահանա (այլ է Թովմա Արծրունուց) և ուրիշներ, հիշում են ձկնորսին և նրա ուտկանը (ՄՄ, ձեռ. № 2607, էջ 22 ա, № 6226, էջ 163 բ)։ Գրիգոր Նարեկացին հիշում է ուտկան, վարմ, ցանց (տե՛ս Գիրք աղօթից, ասացեալ Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ՝ հրեշտակական վարդապետի. Կ. Պոլիս, 1732, էջ 343)։ Հիշում է նաև ձուկը, որպես կերակրամիջոց (Մատենագրութիւնք, էջ 518)։

78 СМОМПК, вып. XXIX, Тифлис, 1901, с. 25—26.

79 Նույն տեղում, էջ 97։

ությունը, որը նույնպես պահանջում էր հմտություն, քանի որ նավում էին նախապես հայտնի ուղղությամբ։

Ամենուրեք, արհեստ հասկացությունն ուներ լայն տարածում։ Այն ընդգրկում էր կյանքի բազմապիսի երևույթներ, որոնք պահանջում էին որոշակի կարողություն և հմտություններ։

РАЗВИТИЕ РЕМЕСЛА В ВАСПУРАКАНЕ В IX—X ВЕКАХ

В. М. ВАРДАНЯН

Резюме

У васпуракаиских писателей (Товма Арцруни (IX в.) и его продолжатель (X в.), Хосров Андзевапи (X в.), Григор Нарекаци (X в.) и другие) часто встречаются термины, обозначающие тот или другой вид ремесла. По разрозненным данным источников почти невозможно составить точное представление о сферах действий городского и сельского ремесла. В процессе складывания феодального города, в васпуракаиских городах начинало преобладать ремесленно-торговое население. Однако из скудных данных источников следует, что там не возникли обособленные кварталы ремесленников и торговцев. Продолжатель Товмы Арцруни указывает, что основными производственными прослойками в регионе были «земледельцы и ремесленники». В развитии ремесел в городах были заинтересованы и васпуракаиские князья. В регионе развивались в основном отделившиеся от земледелия различные отрасли ремесленного производства—металлообработка, ткачество, кожевенное, гончарное, ювелирное и другие ремесла. В железоделательном промысле практиковалось накаливание, ковка железа, паяние. Для литья применялись специальные плавильни. При этом металлообрабатывающие ремесла не всегда зависели от ввоза сырья извне. Развитие ремесленного производства требовало усовершенствования и создания высококачественных инструментов для специализации ремесленников на уровне профессионализации.

---

30 Գրիգոր Նարեկացի. Մատենագրությունք, էջ 182։ Վանա լճում երբեմն նավարկում էին նաև գիշերը. «ի սաւատանգրաստ գիշերոյն հասուցանէր» (Խորոմ Անձևացի, Մեկնութիւն ժամակարգութեան, էջ 212)։ Դա անշուշտ առավել մեծ հմտություն էր պահանջում։